



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2019 թվականի թիվ 61-Ն

ք. Երևան

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԵԹԵՐԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ
կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ
հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից եթերաժամանակ
հատկացնելու կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 հունիսի 2019թ.
ք. Երևան

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ
ԺԱՄԱՆԱԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ
ԵՎ ՌԱԴԻՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ
ԵՎ ՌԱԴԻՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ

1. Սույն կարգով սահմանվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգի և պայմանների հետ կապված իրավահարաբերությունները:
2. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից եթերաժամանակի հատկացման պայմանը վարչապետի կամ նրա կողմից լիազորված՝ Կառավարության այլ անդամի կողմից հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը դիմելու փաստն է:
3. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները պարտավոր են վարչապետի կամ նրա կողմից լիազորված՝ Կառավարության այլ անդամին յուրաքանչյուր եթերային ժամում տրամադրել առնվազն 5 (հինգ) րոպե եթերաժամանակ պաշտոնական հայտարարություններ կատարելու համար:
4. Հեռուստաընկերությունները պարտավոր են օրվա ընթացքում կատարված պաշտոնական հայտարարություններից առնվազն երկուսը հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:
5. Սույն կարգի դրույթները չեն տարածվում բաժանորդային հեռարձակման, կաբելային (մալուխային) հեռուստատեսության կամ արբանյակային կապով եթեր հեռարձակման դեպքերի վրա: